

հորենացիի Ա գրքի մեջ հիշված մյուս օտարազգի աղբյուրներու մասին չենք խոսիր: Մեր նպատակն էր հարց տալ, թե ինչո՞ւ պատմահայրը քանի մը հոնարեն հանրածանոթ աղբյուրներ չէ գործածած, և առ այդ ենթադրությունն ընել:

Ի՞նչ բազմազան քննություններու առիթ տվող գիրք է հորենացիի պատմությունը, և որպիսի՝ թանկարժեք գանձ մը ունի հայ ժողովուրդը:

Եկե՛ք հորենացի որքան մտքի տատաղանք—հոգեկան տանջանքն զատ—ոմնեցած բլլալու է իր գրքի Ա հատվածը շարագրելուն: Առաջագրած բլլալով հայոց պատմությունը սկսել չրհեղեղեն վերջ, նույն թուսն թու թորգումի որդվով, քանի քանի դար ժամանակամիջոց պետք է լեցնենք, և այդ ալ հատուկտոր, հոս հոն տարադնված, օտարազգիներու գրքերուն մեջ ցան ու ցիր, մանր-մունր տեղեկություններն: Ինք, նշգրիտ ժամանակագրության սիրահոր, դիտեր այն հազարավոր տարիները, զորս մի կերպ պետք է լեցնենք: Ափրիկանոսի ժամանակագրութենեն, ինչպես նաև Ավսերիոսիենն սովրած էր, թե չրհեղեղեն մինչև Հիսուսի ծնունդը 3238 տարվա շրջան է: Այդ երեք հազար տարիներու հաշիվը պետք է տար պատմականորեն:

ՀՐԱՆՏ Ք. ԱՐՄԵՆ
(ԱՄՆ, Կալիֆորնիա)

ԲԱԶՄԱԿԻ ԵՆԹԱԿԱՅԻ ԵՎ ՍՏՈՐՈԳՅԱԿԻ ԹՎԻ ՀԱՄԱՉԱՅՆՈՒԹՅՈՒՆԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Գրարարում ենթակայի և ստորոգյալի թվի համաձայնության մեջ հատկապես կարևոր է բազմակի ենթակաների և ստորոգյալի համաձայնությունը թվով, քանի որ բազմակի ենթակաները գործողութան առանձին կատարողների սոսկական շարան չեն, այլ իրար նկատմամբ չանաղան (լրացում-լրացյալ, մասամբողջություն, հակադրվող-հակադրող և այլն) հարաբերությունների մեջ են մտնում, որից ելնելով էլ պայմանավորվում են մի շարք բազմակի ենթակաների ստորոգյալների թվերը:

Բազմակի ենթակաների ստորոգյալը (կամ ստորոգյալները) որպես կանոն հոգնակի թվով պետք է գրվի անկախ այն քանից, թե ենթակաները որ թվով են գրված՝ եզակի՝, թե՛ հոգնակի, հավաքական իմաստ ունեն, թե՛ ոչ: Այսպես. «Գինի և աբեցուրին ԱՊԱԿԱՆԵՆ» (Յ, 103), «Մուշեղ և ամենայն զօրն հայոց անշափ ԱՌԻՆ գաւար... և անշափ ԼՅԱՆ գանձօր... և բազում աւարամասն Պապայ ՊԱՇԷԻՆ» (Փ, V, Բ, 241), «Եւ զօրն և աունն տոհմին Աղձնեաց կոշմանն ԱՊՍԱՄԲՅԻՆ յարքայէն հայոց Արշակայ և ՉՈՒԱՆ ԿԱՅԻՆ առաջի արքային Պարսից» (Փ, IV, Ծ, 205):

Եթե բազմակի ենթակաները ամփոփող մի բառ կա, ինքը դառնում է ենթակա և հոգնակի թվով էլ ստորոգյալ է պահանջում. «Յուպ քո և գաւազան՝ նոքա ՄԵՒԹԱՐԻՆՅԵՆ ղիս» (ԳՍ, իր, 4), «Իսկ թագաւորն և արքայազունք ամենայն և մեծամեծքն և նախարարքն և ազատքն և զօրքն ամենայն՝ իւրաքանչիւր ԲԵՐԷԻՆ իւզս» (Ա, 395,1):

Եվ քանի որ ոչ քիչ դեպքերում բազմակի ենթականերն ընդունում են նաև եզակի թվով ստորոգյալ (չնդում հիմնական կանոնից՝ բակառություն), ուստի այս երևույթի պատճառները բացատրելուն ավելի շատ ուշադրություն պիտի դարձնել: Արձանագրելով այս փաստը՝ Ա. Մեյեն գրում է. «Եթե խոսքը երկու կամ բազմաթիվ իրերի (ենթակաների—Ա. Զ.) մասին է, եզակի (ստորոգյալ—Ա. Զ.) հնարավոր է»:

Նախ և առաջ եզակի ստորոգյալ են ընդունում այն բառերով արտահայտված բազմակի ենթակաները, որոնք նույնանիշ են՝ (օրինակ՝ թշնամի-հակառակորդ, ցեց-ուտիճ, խնդութիւն-ուրախութիւն և այլն), այսինքն այդ բազմակի ենթակաները ոչ միայն իմաստով են իրար մոտիկ, այլ նույնիսկ միևնույն նշանակությունն են ձեռք բերել: Այդ դեպքում պատմիչները կամ թարգմանիչները բազմակի այդ ենթակաները դիտում են ոչ թե առանձին, անկախ միավորներ, այլ մեկ ամբողջություն, ամբողջական մի միավոր կամ, ինչպես Մ. Արեղյանն է ասում, մի

¹ A. Meillet, Introduction a l'étude comparative des langues indo-europeennes. Paris, 1912, էջ 348:

² J. A. Cirbled, Grammaire de la langue armentenne. Paris, 1823, էջ 373:

ընդհանուր գաղափար³ և ըստ այդմ էլ ստորոգյալը գնում են եզակի թվով, Ա. Բագրատունին նման դեպքերում ստորոգյալը եզակի թվով գնելը ավելի օրինական է համարում, «Իսկ որ բազում անուանք նոյնանիշ իցեն կամ զմի ինչ յայտ առնիցեն, առաւել օրինաւորապէս կամ թէ հարկաւ իսկ եզակի առնուն զրայն»⁴ Վ. Չալրիսյանը շատ ընդհանուր ակնարկ է նետում՝ գրելով, թե «Երբ որ շատ եզակի անուններ անուն բայի (ենթակա—Ա. Զ.) ըլլան... երբեմն եզակի ալ կը դրուի (ստորոգյալը—Ա. Զ.), մանաւանդ երբ անուն բայիներն իրարու նման ու մասաւոր բաներ կը ցուցնեն»⁵։ Ահա մի քանի օրինակ. «Թաւկութիւն և սրտմտութիւն ԿԱՅ և ՄՆԱՅ» (Յ, 18), «ՅԼց և ուտիճ ԼԱՊԼԿԼԱՆՆ»⁶ (Ղ, 29, 34), «Եւ է՛ր այն օր անյագ խնդութիւն և անբսպառ ուրախութիւն» (Ղ, 178, 30), «ԵՂՄՅԻ քնամին և հակառակորդն» (Եզ., 151, 8), «ԸՂ ՎՈՅ թեզ մաս և բաժին» (Կրդ, 101), «Փուշ և տատասկ ԲՈՒՍՅԻ» (Կրդ, 250)։

Նույն իրին կամ անձին տրված տարբեր անվանումները եթե ենթակա են դառնում, նրանց ստորոգյալը դրվում է եզակի թվով. «Աստուած և Հայր Տեառն մերոյ Յիսուսի ԿԻՏէ, որ է օրհնեալ յաւիտեանս, զի ոչ ստեմ»⁷ (ՊԹԿՐ, ԺԱ, 31)։ Այստեղ այդ բառերը ըստ էության ոչ թե բազմակի ենթականեր են, այլ մի տեսակ բացահայտիչ-բացահայտյալներ, ուստի և նրանց ստորոգյալը եզակի թվով գնելը դառնում է ընական։

Եզակի ստորոգյալ են ընդունում համանիշ բառ-ենթականները, որոնց իմաստները, ճիշտ է, նվազ մոտիկ են, քան նույնանիշներինը, բայց և այնպես զգալի է և այն, որ հեղինակները իրենց գրածը գեղեցիկ դարձնելու համար են դիմել համանիշ բառերի օգտագործման։ Այսպես. Ագաթանգեղոսի մոտ եթե օգտագործվեր միայն ՎԱՍՏԱԿ-ը կամ ՋԱՆ-ը, կհասկացվեր հեղինակի միտքը, բայց քանի որ նա խուսափել է լեզուն շոր դարձնելուց, ուստի գործածել է ՋԱՆՍԻ ՎԱՍՏԱԿՍ՝ այս բառերի տակ հասկանալով ՄԵԿ բան, ՄԵԿ երևույթ, Ահա նախադասությունը. «Եւ մէր բանքս և ճառքս և չանս և վաստակս ձեզ յօգուտ ՍԵՐՄԱՆԵՍՅԻ. բարեկեաց շատակեաց կենօք զձեզ յերկրի ՎԱՅՆԵՅՈՒՍՏէ և յերկինս հանդերձեալ կենացն ձեզ ժառանգորդ ԱՐԱՍՏէ»⁸ (Ա, 125, 4)։

Կան մի խումբ օրինակներ, որտեղ բազմակի ենթակաները համանիշ կամ նույնանիշ չլինելով հանդերձ եզակի ստորոգյալ են ունենում։ Այդ բացատրվում է նրանով, որ երևույթը կամ իրը մեկ բառով բնութագրող ենթակա վերցնելու փոխարեն օգտագործում են այդ երևույթի կամ իրի զանազան արտահայտությունները, կողմերը և ներկայացնում որպես բազմակի ենթակա, բայց այնպես, որ այդ զանազան արտահայտությունները, կողմերը միտում են իրենց սկզբունականորեն Այսպես՝ ՈՍԿԻ և ԱՐԾԱԹ՝ ՀԱՐՍՏՈՒԹՅՈՒՆ, Այստեղ գործում է մոտավորապես ընդհանրացման և թանձրացարկման երևույթը, ճիշտ նույն սկզբունքով էլ ՈՐՈԳԱՅԹ, ՀՈՒՐ, ԾԾՈՒՄԲ-ԱՂԷՏ, ԲԱՆՋԱՐ, ԾԱՌ-ԲՈՒՍԱԿԱՆՈՒԹԻՒՆ, Բերենք մի քանի օրինակներ՝ հնարավորություն չափով դրանք խմբավորման ենթարկելով¹⁰. «Կուրուտ և Բանդումն յուզեալ խաղացեալ ԳԱՅ ի վերայ կորստական աշխարհիս հայոց այնոցիկ» (Փ., IV, ԺԳ, 148) [ԴԺԲԱԽ-ՏՈՒԹՅՈՒՆ], «Մեհութիւն և ճիւղնդութիւն ՊԱՏԵՐԱՋՍ է ժամանակեայ» (Ե, Խ, 216) [ԹՈՒԼՈՒԹՅՈՒՆ], «Յոյժ ՍԻՐԵԼԻ է՛ր նմա խոռվութիւն և աբիւնահեղութիւն» (Եզ., 7, 1) [ԱՎԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ], «Խաղաղութիւն և շիւնութիւն, մաղաչատութիւն և առողջութիւն, պողարեութիւն և սասցումածատութիւն և ջանեկանութիւն և մեծն աստուածասէր պաշտօն ի հաճոյակատարն բարութիւն յամս յսուր սոցա աճել ԲԱՋՄԱՏԱԽ» (Փ, III, Գ, 19) [ԲԱՐԻԹ], «ԼԵՆՍԷ մերձ

3 Մ. Արեգյան, Գրարարի քերականություն, Երևան, 1936, էջ 160։

4 Ա. Բագրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոո, Վենետիկ, 1852, էջ 257, § 555։

5 Վ. Չալրիսյան, Քերականութիւն հայկադեան լեզուի, Վիեննա, 1885, էջ 210—211։

6 Այն աղբյուրը (Սատթ., Զ, 19), որտեղից վերցված է այս նախադասությունը, հոգնակի ստորոգյալ ունի։ Հոգնակի ստորոգյալ ունեն նաև Ղ. Փարպեցու աշխարհարար և ֆրանսերեն թարգմանությունները։ Համապատասխանաբար տես Ղ. Փարպեցի, Հայոց պատմութիւն, Ալեքսանդրապոլ, 1895, էջ 210 և СНАМА II, էջ 314, սյունակ 1։

7 Նույն բնույթը պիտի ունենա ԳԱՂ, էջ 22։

8 Նույն ձևով է վարվել և ՍԹ, էջ 12ր։

9 Հմմտ. В Адмони, Введение в синтаксис современного немецкого языка, Москва, 1955, էջ 63—66։

10 Օրինակներից հետո դրված ուղղագրի փակագծի միջի բառը ցույց է տալիս այդ բազմակի ենթակաների արտահայտած ընդհանուր իմաստը։ Հնդ որում թերևս խմբավորման որևէ պայմանական բնութագրում թերի կամ սխալ կարող է լինել։

Ընդ մերձ լրագրություններն յազգէր Արշակունեաց և Բանանայութիւն ի ցեղէ աբժանաւոր քահանայապետին Գրիգորին (Ղ. 34, 11) [ՂԵԿԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ], Վիեննայ սուր և տրամաւորներն (Փ. 1V, Ե, 121) [ՎԻԵՆՆԱ], Եւ. ՊԱՏԵՐԱԶՄԷՐ ազգ բեզ ազգի և Բաղամ բեզ քաղաքին (ՄՔ. ԺԵ, 6) [ՄԱՐԴԿԱՆՅ ԵՈՒՄՔ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՄԻԱՎՈՐ], Վալեսուր և Էառ վասն մերոյ վայելչութեան ՍՏԵՂՏԱԻՍ (Կրդ. 205) [ՔՈՒՍԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ], Վերապուր և Բաղլիկ ևս ԵՂԵՒ մեզն (Փ. 1V, 2, 126) [ՍՆՈՒՆՆ] և այլն:

Նշանակի ստորոգյալ են ընդունում նաև այն բազմակի ենթակաները, որոնք արտահայտում են որևէ հրեույթի, իրի տարրեր մասերը, բազադրիչ տարրերը, որոնք սակայն վերջին հանգիստում են իրենց մեն՝ հիմնական իմաստն արտահայտելու։ Այդ է պատճառը, որ սի միոյ՝ հրերը ՆԱՆՆԻ սղոցն և զազուն, Էրէ վայրի, փայտ և կեւահուր, ուղի և տըմար, պոլեն և եւկար և Բուր (Կրք, 152) նախադասութեան մեջ և այլուր բազմակի ենթակաները եզակի թվով ստորոգյալ են ընդունում։

Երբեմն բազմակի ենթակայի և ստորոգյալի թվի այդ անհամաձայնությունը բխում է այն բանից, որ բազմակի ենթակաները իրար նկատմամբ չեն վերադաս-ստորադրյալի հարաբերություն, որտեղ առաջին տեղը զբղած ենթական լինում է կամ որևէ հրամանատար, կամ ընտանիքի գլուխ, կամ մի բանի տեր և այլն¹¹։ Թվի անհամաձայնության որանից բխող մյուս պատճառն էլ այն է, որ հեղինակները հիմնական շնորք գնում են ավերադաս ևնթակայի վրա, և բոտ այդմ էլ ենթական եզակի թվով ստորոգյալ է պահանջում։ Ինչ վերաբերում է համադասական միավորիչ շաղկապներին, ապա սրանք ձուր են բերում Բիշպեն և Իմաստ, որից հետո եկած ենթակաները, ինչպես հայտնի է, ստորոգյալի թվի վրա կարող են երբեք էլ չադգել։ Այս հանգամանքը նկատել է Գառնիկ Ֆետչլյանն իր հրատարակած «Կորիւն, Վարք Մայր-տոցիւ գործում» Կորյուների մի նախադասության կապակցությամբ¹²։ Այդ շնչ ապացուցում արդյոք ներքոհիշյալ օրինակները. «ԵՂԱԴԱՐՆԸՐ անդ ինքն և ամենայն գունդին» (Ղ, 164, 12), «ԵՄ ՍԱՏԱԿԵՑԱԿ ևս և զօրն» (Մ, 156, 19), «ԵՄ ՄՏՑԵՍ ի տապանն զու և ողիմ բո և կին բո և կանայի որդւոց քոց քնդ քեզ» (Ծն., 2, 18)։

Ի տարբերություն այն բազմակի ենթակաների, որոնց իմաստի մերձավորությունը բնորոշի է նախադասությունից դուրս էլ, ստորե բերված ենթակաների իմաստները իրար մաս չեն կամ համարյա իրար մոտ չեն, այլ լոկ նախադասության մեջ պարագիներն լինելով և նույն գործողությունը մասնակից գտնալով է, որ նրանց իմաստները ինչ-որ հեռավոր կապ են մեծր բերում։ Այսպես օրինակ. «Ուր ամենայն տիեզերաց ԿԱՐԳՅԱՒ ընդունելութեան աւանդութեանն հաւատն և կարգն լուսաւորութեան (Ա, 465, 7), «Սի է բնութիւն և զուութիւն ամենասուրբ Երրորդութեանն» (3, 9)։

Որոշ գեպքերում բազմակի ենթակառուցների հզակի թվով ստորոգյալ ընդունելուն նպաստել են ենթակայի զեղչումը, ենթակառուցների ու ստորոգյալների միմյանցից հեռու ընկած լինելը։ Այդպիսի գեպքերից մեկը նկատելի է Ստ. Լիոնեի՝ Իր սվազակատարը (le parfall) զասական հայերենում գրքում։ Նա, բերելով Մատթեոսի Ավետարանի ԺԱ գլխի 21-րդ և Ղուկասի Ավետարանի Ժ գլխի 13-րդ տեղերը՝ ավելացնում է. «Ենթակառուց առանհայտված չէ, սակայն ջանք ու խոսքը ԵՐԿՈՒՆ (ընդգծումը հեղինակինն է—Ա. Զ.) ծաղաքների՝ Տիրոսի և Սիդոնի մասին է, և ստորոգյալը մեծում է հզակի, ուստի նախադասության կառուցվածքը բացահայտ կերպով անդամ է՝ 13, Ցավոք, Ստ. Լիոնեին անհամաձայնությունը բացատրում է նախադասության անդամ լինելով և չլի ընդունում Ոսկանի սրբագրությունը։

Որոշ հանգամանքների առկայությամբ համահնչունություն ունեցող բառերը մեծ քերականորեն խմառային ընդհանրություն, գրվում են կից և հանդես են գալիս որպես բազմակի ենթակա: Խոսքը հատկապես ՍՈՒՐ ԵՒ ՍՈՎ-ի ու ԽԷԹ ԵՒ ԽՈՒԹ-ի մասին է. որոնք «համանիշ» են զարմել այն առումով, որ սուր-ն ու սով-ը մահ են բերում, իսկ ԽԷԹ-ն ու ԽուԹ-ն էլ արդեւակում են որի՞ բան: Համահնչունությամբ ու խմաստով մոտիկացած և բազմակի ենթակա կազմող այս բառերն էլ եզակի ստորոգյալ են ընդունում. «Զի ՄԻ՝ ումիք չԻՅԻ իւր և խուր այնու-

¹¹ *Հմտ. այս երևույթը ժամանակակից բուլղարերենի հետ: ՏՀ-ն* Л. Андрейчин, *Грамматика болгарского языка*. М., 1949, § 349:

12 Կ ո Ր յ ու ն, Վ ա Ր Ք Մ ա չ տ ո ճ ի, Ե Ր ու ա զ հ ա մ, 1930, է չ 49: Տ Ի ն «Բ ա ա ո ղ ի տ ու թ յ ու ն և
Հ ա մ հ ա տ ու թ յ ու ն» բ ա մ ի ն ու:

¹³ S. Lyonnet, *Le parfait en armenien classique*, Paris, 1933, t. 2.

«ԵՂԵԻ ՆՄԱ ԹԷ՝ չաւր, և ԹԷ՝ Բաւրի»¹⁶ (Ե, 92)։ Այս շաղկապներով տրոհված ենթակաները եզակի ստորոգյալ են ընդունում երբեմն նաև այն դեպքում, երբ ենթականերից մեկը կամ մի քանիսը հոգնակի թվով են դրված (տե՛ս ՊԹԶ, ր, 38)։ Իսկ եթե այդ հոգնակի և բազմակի ենթակաները ամփոփող մի բառ-ենթակա կա, ստորոգյալը եզակի թվով դնելը դառնում է «օրինաչափ» (տե՛ս Եղ., 40, 14, 3, 79, Ա, 96, 4 և այլուր)։

Սակավ դեպքերում է, որ կամ, քի... քէ', ո՛չ... ո՛չ շաղկապներով տրոհված ենթակաները հոգնակի թվով ստորոգյալ ստանան։ Այդ պատճառով է այն ժամանակ, երբ այդ շաղկապներն ունենում են և-ի իմաստ։ Այսպես, «Այլ կամ կի՛ն Մի՛ ևս ԳՈՐԾԵՆՅՈՒՆ ի պտուղ սրբութեանն» (Ելք, ԼԶ, 6) նախադասության մեջ «այլ կամ կին» նշանակում է ոչ թե նրանցից մեկն ու մեկը, այլ՝ այլ-ն էլ, կին-ն էլ։ Սխալ պիտի համարել «Արցառ կամ ոչխար կամ այժ յորժամ ԾնԱնի-Ցին, ԿԱՅՑԷ զեթն օր ընդ մարր» (Ղեւտ., ԻԲ, 27) նախադասությունում առաջին՝ ծնանցին ստորոգյալը հոգնակի թվով գնելը, քանի որ, ինչպես և Եղեիկի վերջին նախադասությունում, կամ-ը արտահայտում է պրջառի կամ ոչխարի կամ այժի՝ նրանցից որևէ մեկի (ծնվելու) հնարավոր լինելը, հետևաբար և ստորոգյալը պետք է լինել եզակի՝ այն թվով, որ լվով որ դրված է նրան հաջորդող ԿԱՅՑԷ ստորոգյալը։

Ցայժմ քննված բազմակի ենթականերից զգալիորեն տարբերվում են այն «բազմակի» ենթակաները, որոնք արտահայտվում են քերականական այլ միջոցներով։ Ինչ վերաբերում է այդ տարբեր տեսակի բազմակի ենթակաների արտահայտած իմաստին, ապա, ինչպես կերևա ստորև բերված համեմատությունից, բոլորն են բազմակի ենթակաների արտահայտած իմաստից շատ քիչ բանով է տարբերվում այն։ Իրոք, մեծ տարբերություն կա «Վահան Մամիկոնեան և Սահակ մարզպան», «Վահան Մամիկոնեան հանդերձ Ոհանակա մարզպանաւ» և «Վահան Մամիկոնեան Սահակաւ մարզպանաւ» բառակապակցությունների արտահայտած ընդհանուր իմաստների միջև։ Իհարկե ոչ։ Այդ իսկ պատճառով հարմար դատեցինք բոլորն ենթակաները քննելուց հետո անուշադրության շմատնել և «զատուղի» բազմակի ենթակաները։

Միասնության պարագա արտահայտող անդամը շնայած մոտավորապես հավասար չափով է մասնակցում ենթակայի գործողությանը, բայց և այնպես նրանց ստորոգյալը դրվում է եզակի, քանի որ բուն ենթակայի «միջնորդությամբ» է, որ մասնակցում է գործողությանը։ Օրինակ, «Վի՛նն խոռան երկուք ես այլ զօրաւոր Եղեակակցօք զօրու դարձեալ ընդդեմ ԽԷՋԱԽԷՐ» (Ղ, 130, 14), «Վարդան իւրովք քաջ Եղեակակցօքն ոչ սակաւ նախճիրս ի տեղուցն ԳՈՐԾԵՆՅՈՒՆ» (Եղ., 118, 9)։ Այսուհանդերձ նման դեպքերում ստորոգյալը ավելի հաճախ հոգնակի ստորոգյալ է ունենում. «Վահան ուխտակից Խախաբաբօքն Հայոց, որ ընդ նմա էին, ԿԱՅԻՆ անգ աւուրս և ԿԱՏԱՐԷԻՆ գուխոս և զնուլրս» (Ղ, 176, 31)։

Երկու տարբեր, բայց ոչ իրավահավասար ենթականեր իրար հետ կարող են շաղկապվել հանդերձ նախադրությամբ։ Բուն ենթական այստեղ գործողության հիմնական կատարողն է, համագործակից ենթական գործողությանը մասնակցում է ի միջի այլոց, հետևաբար և ստորոգյալը եզակի թվով է դրվում։ «ԶՈՒ ԱՌՆԷՐ յԱժուղ գեղչէն, ԽԱ՛ՂԱՅՐ ԳՆԱՅՐ ճնպով իշխանն արքային Պարսից Խանդերձ Տիրանաւ աբխայիս» (Փ, 111, Ի, 76) նախադասությունում չվելու, չնալու գործողություն կատարողը հիմնականում պարսից իշխանն է, ուստի այս և նման դեպքերում ստորոգյալը եզակի է դրվում։

Թվի համաձայնության խախտում է թույլ տրվում, եթե «հանդերձ» նախադրությամբ մի երկրորդական ենթակա լինելիս եզակի թվով հանդես եկող բուն ենթակայի ստորոգյալը հոգնակի թվով դրված լինի։ Իսկ եթե ստորոգյալը սնուամենայնիվ հոգնակի թվով է դրված, նշանակում է հեղինակը, կամ թարգմանիչը, այդ երկու ենթակաները դիտում է որպես հավասարազոր ենթականեր, հետևաբար և այստեղ «հանդերձ»-ը ստանում է համադասական՝ բուն միավորիչ շաղկապի իմաստ։ Օրինակ. «Եւ յետ այսորիկ սուրբն Գայիանէ սանականաւ Հովսիսիսեաւ և պարկեշտաժողով ընկեօքն Խանդերձ դէմ եգեալ, տարագէմ գնացեալ ՓԱԽՍՏԵԱՅ ԼԻՆԷԻՆ, զի յանձինս իւրեանց սրբութեամբ ՊԱՇՏՈՅՆ» (Ա, 61, 1), «Արքայն Արշակ Խանդերձ զօրավարան Վասակաւ յերկոսին դուրս սահմանացն ԶՈՒՇԱՆԱՅԻՆ» (Փ, IV, ԻԳ, 188)։

Եթե որևէ ենթակայի ընկերանում է «և որ(ք) ընդ նմա է(ին)» նախադասություն-ենթական, նշանակում է գործ ունենք համարյա բազմակի ենթակաների հետ, քանի որ բուն ենթա-

¹⁶ ՔՕ, t. XXVIII, f. 3-ի էջ 59—60-ում առաջարկված սրբագրությունը նկատի ունեցել ենք, բայց քանի որ այն խիստ կասկածելի է, նախադասությունը թողել ենք այնպես, ինչպես կա 1911 թ. հրատարակության մեջ։

կայի կատարած գործողությանը համամասնակից է դառնում նաև «Եւ որք ընդ նման ենաւ Եւ Եւ ի թե նրանց ստորոգյալը դրված է հոգնակի, նշանակում է հնդիակը, կամ թարգմանիչը, «հիմնական» և «երկրորդական» ենթակաները համարում է համադրը, հավասարաթեքը, Ահա մի երկու օրինակ. «ԾԱՐԱԽՅԱՆ Նա և որք ընդ նմա էին» (Փ, III, Ժ, 38), «Եւ երանելին Մաշտոց և որք ընդ նմա պատուական Բահանային էին, ՈՉ ԶՕՐԷԻՆ Համարձակել յայսպիսի սաստիկ և կարեւոր գործ՝ թարգմանել գիրս ի յոյն լեզուոյն ի հայ լեզու, վասն զի ՈՉ էին աշխատել ՏԵՂԵՆԿԻ գիտնապէս հրահանգի յունարէն ուսմանն» (Ղ, 16, 16)։ Իսկ եթե ստորոգյալը դրված է եզակի, նշանակում է «հիմնական» ենթակա է ընդունվում նախադաս ենթական, իսկ «Եւ որք ընդ նմա էին»-ով արտահայտված ենթական դիտվում է որպես երկրորդական գործող անձ. «Մրտմտեալ ԶԱՅՐԱՅԱԻ Վեհեղեշապուհ և որք ընդ նմա հաւատարմիմ էին» (Ղ, 98, 27), «Եւ ՄՆԱՅ միայն Նոյ և որք ընդ նմա էին ի տապանի անդ» (Ծն., է, 23)։ Ղ. Փարպեցին ունի մի նախադասություն, որտեղ օգտագործված են և՛ եզակի, և՛ հոգնակի թվով ստորոգյալներ. «Յայնժամ ՀՐԱՄԱՆ ՏԱՅՐ Վեհեղեշապուհ և որք ընդ նմա օգնական էին՝ կոչել ի ծածուկ ի գիշերի զականաւոր արս շահաստանին... և ՊԱՏՈՒԽԷՆ նոցա հրամանաւ արքունի» (Ղ, 93, 1)։ Այստեղ, ըստ երևույթին, դեր է խաղացել նաև ստորոգյալների շարահասությունը (նախադաս ստորոգյալը դրվել է եզակի, իսկ հետագայը՝ հոգնակի)։

Այս նախադասություն-ենթական օգտագործվում է նաև առանց օժանդակ բայի։ Սակայն եթե «Եւ որք ընդ նմա էին»-ը երբեմն միտում էր ունենալ նույն «արժեքը», ինչ «բուն» ենթական, ապա այս բառակապակցությունը զուրկ է այդ հնարավորությունից։ Այդ իսկ պատճառով էլ սրանցով բաղադրված եզակի ենթակաները հոգնակի ստորոգյալ չեն ընդունում. «ՍԿԱՆԻ ընկենուլ ի կղզի անդր ծովն սաստիկ յոյժ, մինչև շեղս ԿՈՒՏԷՐ ի ցամաքի կղզույն և ընդ նմին փախտ սաստիկ յոյժ» (Փ, IV, 2, 125)։ Այլ բացատրության կարիք ունի «Եւ» բառով պատկերազմունս ՄՏԵՆԱԼ է իմ և ձեր ընդ իս» (Եղ., 100, 25) նախադասությունը, որտեղ ստորոգյալը եզակի թվով գնելու պատճառը ենթակայի սեռական հոլովով հանդես գալն է։

Բազմակի ենթակաների և ստորոգյալի թվի համաձայնության օրինաչափությունները քրնենելիս կարելի է հանգել հետևյալ ընդհանուր եզրակացություններին. 1. բազմակի ենթականեր ունեցող նախադասությունում ստորոգյալը որպես կանոն դրվում է հոգնակի թվով. 2. իմաստային, շարահասակա՝, կառուցվածքային¹⁸ զանազան հանգամանքների առկայությամբ բազմակի ենթակաները կարող են հոգնակի ստորոգյալի փոխարեն եզակի ստորոգյալ ստանալ։

Ինչպես տեսնում ենք, բազմակի ենթակաների ստորոգյալի թիվը որոշելիս բացարձակ չափանիշներ չկան, Չափանիշ կարող է լինել մի բան. թե գրողի մոտ ինչ է նկատի առնված՝ բազմակի ենթակաների միասնությունը, թե՝ առանձնությունը, նրանց քերականական թիվը, թե՝ լոկալիզացիոն իմաստը։ Ստորև բերված երկու զուգահեռ օրինակները կարող են վկայել, որ միևնույն գործողությունը և գործողության միևնույն կատարողները արտահայտող երկու տարբեր նախադասություններում նույնպես ձևեր (Սալուդը և նրա որդիներն ու կապարճակիրը) մի տեղ հոգնակի ստորոգյալ կարող են ստանալ, իսկ մյուս տեղ՝ եզակի։

«Եւ ՄԵՌԱԻ Սալուդ և երեքն ուղիք նորա և կապարճակիրն իւր և ամենայն արք նորա յաւուր յայնմիկ ի միասին» (ԹԱ, Ա, 6),

«ՄԵՌԱԻ Սալուդ և ուղիք նորա» (ԹԱ, Ա, 7)։

«Եւ ՄԵՌԱՆ Սալուդ և երեքին ուղիքն իւր յաւուր յայնմիկ» (ՄԱ, Ժ, 6),

«ՄԵՌԱՆ Սալուդ և ուղիք նորա» (ՄԱ, Ժ, 7)։

Շատ հնարավոր է, որ զանազան պատճառներ ևս ազդեն այն բանի վրա, որ այս կամ այն բազմակի ենթակաները ընդունեն հոգնակի, և առավել ևս՝ եզակի, ստորոգյալ։ Հնարավոր է և

¹⁷ Տե՛ս Ա. Բաբրատունի, Հայերէն քերականութիւն ի պէտս զարգացելոց, էջ 256, § 337. Նույնի՝ Տարերք հայերէն քերականութեան, Վենետիկ, 1800, էջ 134. Մ. Զամչյան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Շուշի, 1859, էջ 453. Գ. Ավետիսյան, Քերականութիւն հայկական, Վենետիկ, 1813, էջ 476, Մ. Տեր-Հարությունյան, Քերականութիւն, Կ. Պոլիս, 1808, էջ 149—150. J. A. Cirbied, Grammaire de la langue armenienne, էջ 373։

¹⁸ Տե՛ս Ս. Մալխասյան, Դրարարի համաձայնությունը, Թիֆլիս, 1892, էջ 35։

այն, որ այս կամ այն օրինակներում գործի ստորոգյալի զեղչման երևույթը, և այն, որ նախադասությունը կազմելիս հեղինակը միայն մեկ ենթակա նախատեսելուց և ըստ այդմ էլ ստորոգյալի թիվը համաձայնեցնելուց հետո թվարկի շնախատեսված ենթականեր, և այն, որ հնարավոր բոլոր կամ մի քանի պատճառներ համատեղ հանդես գան, Արդյունքը, բոլոր դեպքերում, այն երկվությունն է, որ առաջանում է բազմակի ենթականերին որևէ թվով ստորոգյալ վերագրելիս:

ՀԱՄԱՌՈՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲԱՆԱԼԻ

- Ա Ագաթանգեղեայ Պատմութիւն հայոց, Տփղիս, 1909
 ԱԹ Մատենադարանի արխիվ, ֆոնդ Ջանազան հեղինակներ, թղթապանակ № 47, վավերագիր № 29
 ԳԱՂ Գործք առարելուց. Ղուկայ աւետարանչի (Աստվածաշունչ)
 ԳՍ Գիրք սաղմոսաց (Աստվածաշունչ)
 Դան. Դանիէլ (Աստվածաշունչ)
 Ե Եզրեկայ Կողբացւոյ Եղծ աղանդոց, Թիֆլիզ, 1914
 Ն.Խ Նորին Խրատք
 Եղ. Եղիշէի Վասն Վարդանայ և հայոց պատերազմին, Երևան, 1957
 ԲԱ Բագաւորութեանց Ա (Աստվածաշունչ)
 Մն. Մնոմոք (Աստվածաշունչ)
 Կ Կորյուն, Վարք Մաշտոցի, Երևան, 1941
 Կրդ Կիրդի Երուսաղեմայ հայրապետի Կոչումն ընծայութեան, Վիեննա, 1832
 Ղ Հազարայ Փարպեցւոյ Պատմութիւն հայոց, Տփղիս, 1904
 Ղևտ. Ղևտական (Աստվածաշունչ)
 Մ. Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց, Տփղիս, 1913
 ՄԱ Մնացորդաց Ա (Աստվածաշունչ)
 Մատթ. Աւետարան ըստ Մատթէոսի (Աստվածաշունչ)
 ՄԲ Մնացորդաց Բ (Աստվածաշունչ)
 ՄԵ Մարգարէութիւն Եսայեայ (Աստվածաշունչ)
 ՄԵր. Մարգարէութիւն Երեմեայ (Աստվածաշունչ)
 Յ Յաճախապատուտ, Վինետիկ, 1954
 ՅՅ Յայտնութիւն Յովհաննու (Աստվածաշունչ)
 ՊԹԿՐ Պողոսի Թուղթ առ Կորնթացիս Բ (Աստվածաշունչ)
 ՊԹՀ Պողոսի Թուղթ առ Հռովմայեցիս (Աստվածաշունչ)
 Փ Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն հայոց, Վինետիկ, 1914

CHAMA Collection des historiens anciens et modern de l'Arménie, par Victor Langlois, Paris

PO Patrologia orientalis

Ա. ՉԵՅԹՈՒՆՅԱՆ

ԲՈՒՅՍԵՐԻ ՊԱՇՏԱՄՈՒՆՔԻ ԱԶԳԵՑՈՒԹՅՈՒՆԸ
 ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՎՐԱ

Բույսերի պաշտամունքը նախաքրիստոնեական շրջանում այս կամ այն շափով տարածված է եղել աշխարհի բոլոր ժողովուրդների ու ցեղերի մեջ: Այն Հայաստանում ևս տարածված է եղել հեթանոսության մասնակի Բազմաթիվ նյութեր կան կաղնու (Quercus), սոսու (Platanus), թեզու (Ulmus), բաշնու (Celtis), բնկույզնու (Juglans), բաբգու (Populus), ուռնու (Salix) և այլ ծառատեսակների պաշտամունքի վերաբերյալ: Այդ պաշտամունքի կենդանի վկաներն են այն ծառերի դարավոր ներկայացուցիչները Հայաստանի զանազան մասերում, որոնց շարահան էն կոչում: Այդ պաշտամունքի հետքերն են կրում նաև մի շարք աշխարհագրական անուններ: Ինչպես, օրինակ, Արածանի գետի ափին Յիւլի անունով գյուղ կա, որի անվան ծագման